# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

18 ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆ

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Արարատ Թումանյանը, Մարուսյա Հովհաննիսյանը, Արտուշ Մաթևոսյանը, Շահեն Մինասյանը, Վերոնիկա Միքայելյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Աննա Նավասարդյանը**

**ԼՍԵՑ** - ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/*

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 18-ի N4 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

3)Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին

5)Հայաստանի Հանարապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների նախագահի տեղակալներ ընտրելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N 87-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին

6)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Սերյոժա Գրիգորի Գաբրիելյանին օտարելու մասին

7)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Լյովա Արշավիրի Աւիարոնյանին օտարելու մասին

8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 26-Ա/**

**ԼՍԵՑ** - ***ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. Հաստատել Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝
1) եկամուտների գծով՝ 915,137.200 հազար դրամ
2) ծախսերի գծով՝ 876,720.3 հազար դրամ:

2. Հաստատել բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հետևյալ հավելվածների.
1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված N 1
2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված N 2
3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված N 3
4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N 4
5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված N 5:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 27-Ա/**

**ԼՍԵՑ** - ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - Հաստատել Մեղրի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 28-Ա/**

**ԼՍԵՑ** - ***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հաստատել «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:
2.Սահմանել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն N2 հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 29-Ն/**

**ԼՍԵՑ** - ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 30-Ն/**

**ԼՍԵՑ** - ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու Ֆինանսավարկային եվ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրապետություն» խմբակցության անդամ Արթուր Գրիգորյանին:

2.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու Մշակույթի, կրթության, սպորտի, սոցիալական հարցերի, պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրապետություն» խմբակցության անդամ Արևիկ Ստեփանյանին:

3.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու Քաղաքաշինության եվ հողօգտագործման, իրավական եվ ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրապետություն» խմբակցության անդամ Արտուր Բաղդասարյանին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը հաստատելու եվ Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 87-Ա որոշման հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:

**Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-3**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 31-Ա/**

**ԼՍԵՑ** - ***ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՍԵՐՅՈԺԱ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաք Ս. Ալավերդյան փողոց 1/1 հասցեում գտնվող 103,62 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,11077 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0006-0009, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04032022-09-0023 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով

սահմանված կարգով օտարել Սերյոժա Գրիգորի Գաբրիելյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-ի կետի ա) ենթակետով, 35-ի կետի ա) ենթակետով և 35. 1 կետով սահմանված գներով.

1) Բնակելի տան համար 30 000 դրամ x 0,1209 x 103,62 քմ =375 830/ երեք հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ:

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած ինքնակամ կառույցով զբաղեցված 1000 քմ հողամասի համար՝ 1221 դրամ x 1000 քմ = 1221000 (մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ:

3) Պահպանման և սպասարկման համար ամրակայած ինքնակամ կառույցով զբաղեցված տարածքի՝ 1000 քմ հողամասից ավել, հողամասի համար կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 3663 դրամ x 107,7 քմ = 394 506 /երեք հարյուր իննսունչորս հազար հազար հինգ հարյուր վեց / ՀՀ դրամ:

4) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-2**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 32-Ա/**

***ԼՍԵՑ - ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԼՅՈՎԱ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Զ. Անդրանիկի փողոց 5-րդ փակուղի 7 հասցեում գտնվող 81,4 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00646 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0072-0019, անշարժ

գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07032022-09-0048 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Լյովա Արշավիրի Աիարոնյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի ա) ենթակետերով սահմանված գներով.

1) Բնակելի տան համար 30 000 դրամ x 0,1209 x 81,4 քմ =295 238/ երկու հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 1221 դրամ x 64.6 քմ = 78 877 (յոթանասունութ հազար ութ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ:

3)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-2**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 33-Ա/**

**ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՌՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն և համաձայն հավելվածի, որպես առաջնահերթ միջոցառում, հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրել 0,15 հեկտար, որից համայնքային սեփականություն հանդիսացող 0.06413 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք /կադաստրային ծածկագիր՝ 09-066-0112-0001-ից/ և պետական սեփականություն հանդիսացող էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից 0,08587 հեկտար

<<տրանսպորտի օբյեկտների հողեր>> /կադաստրային ծածկագրեր՝ 09-066-0370-0001-ից/:

2. Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված 0,06413 հեկտար մակերեսով հողամասը, անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվության) օտարել Հայաստանի Հանրապետությանը:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 34-Ա/**

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

**Համայնքի ղեկավար՝** ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ

**Նիստն արձանագրեց՝ Աննա Նավասարդյան**